ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

05.12.2018թ. | ժամը 11:00-13:00 | «Իբիս Երևան Կենտրոն» հյուրանոց

Մասնակիցներ՝ **Բազմաշահառու խմբի անդամներ**

Նախագահող՝	Արարատ Միրզոյան	Առաջին փոխվարչապետի պաշտոնակատար
	Դավիթ Անանյան	Պետական եկամուտների կոմիտեի նախագահ
	Իրինա Ղափլանյան	Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ
	Վարդան Գևորգյան	Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ
	Կարեն Իսախանյան	Տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
	Արման Պողոսյան	Ֆինանսների նախարարի տեղակալ (այլընտրանքային անդամ)
	Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ադմինիստրատիվ տնօրեն
	Պերճ Խաչատրյան	Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի իրավաբանական դեպարտամենտի ղեկավար
	Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
	Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն
	Ինգա Զարաֆյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ
	Հարություն Մովսիսյան	Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ
	Մանվել Եղիազարյան	«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ (այլընտրանքային անդամ)

Անդրանիկ Աղաբալյան	«Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ (այլընտրանքային անդամ)

ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարություն

Լիլիա Շուշանյան	քարտուղարության ղեկավար
Լուսինե Թովմասյան	քարտուղարության փորձագետ
Անահիտ Առուստամյան	քարտուղարության փորձագետ

Հյուրեր՝

Աննա Կարապետյան	Առաջին փոխվարչապետի պաշտոնակատար Ա. Միրզոյանի գրասենյակ
Քրիստինե Գրիգորյան	Առաջին փոխվարչապետի պաշտոնակատար Ա. Միրզոյանի գրասենյակ
Դավիթ Կարապետյան	Առաջին փոխվարչապետի պաշտոնակատար Ա. Միրզոյանի գրասենյակ
Շուշանիկ Քերոբյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
Նարինե Թադևոսյան	Համաշխարհային բանկի գրասենյակ Հայաստանում
Ենս Պետերսեն Թումզեր	Գերմանիային միջազգային համագործակցության ընկերություն
Ալեքսանդր Դրագոյլովիչ	Գերմանիային միջազգային համագործակցության ընկերություն
Գոռ Խաչատրյան	Գերմանիային միջազգային համագործակցության ընկերություն
Վարանդ Մկրտիչեան	Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կետրոն (ՀԱՀ ՊՀԿ)
Լիտտա Մուրադյան	Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կետրոն (ՀԱՀ ՊՀԿ)
Սաթենիկ Հովհաննիսյան	հասարակայնության հետ կապերի (PR) փորձագետ

Անկախ ադմինիստրատոր՝

Վահագն Մարուխյան	«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ
Լևոն Գևորգյան	«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ

Մարիկա Հարությունյան	«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ
Նվարդ Ռոստոմյան	«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ

ԲՇԽ-ի բացակա անդամներ՝

Սուրեն Քրմոյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Արմեն Ստեփանյան	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով փոխնախագահ
Արթուր Համբարձումյան	«Հասարակական ձայն» («ՍիվիլՎոյս») հասարակական կազմակերպության խորհրդի անդամ
Արամ Օսիկյան	«ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն (այլընտրանքային անդամ)
Դավիթ Թադևոսյան	«Թեղուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ (այլընտրանքային անդամ)

Արձանագրող՝ Անահիտ Առուստամյան

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի (ԲՇԽ-ի) նիստի բացում

Ա.Միրզոյանը, որպես ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ, ողջունեց նիստի մասնակիցներին և նշեց, որ տվյալ նիստը ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի ամենակարևոր նիստերից է՝ հաշվի առնելով, որ նախատեսվում է հաստատել ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցը, ինչպես նաև փաստաթղթեր, որոնցով նախատեսվում է ՀՀ ԱՃԹՆ-ի առաջիկա երկու տարվա գործունեությունը: Նիստը նախագահողը ներկայացրեց Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում ԱՃԹՆ-ի ներդրման շրջանակում իրականացված աշխատանքները՝ որպես կարևոր առաջընթաց առանձնացնելով զեկույցի կազմումը և իրական սեփականատերերի բացահայտումը և հանրային ռեգիստրի ստեղծումը ապահովող օրենքների նախագծերի մշակումը: Նշվեց ընթացիկ տարում ՀՀ ԱՃԹՆ-ի իրականացրած աշխատանքների ընթացքում Համաշխարհային բանկի (այսուհետև՝ ՀԲ) և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) ցուցաբերած աջակցության մասին, ինչպես նաև ներկայացվեց Հայաստանի ԱՃԹՆ-ի նոր գործընկերը՝ Գերմանիային միջազգային համագործակցության ընկերությունը, որը ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքներում կցուցաբերի տեխնիկական աջակցություն: **Ա. Միրզոյանը** նշեց նաև, որ կառավարությունը, մասնավորապես կոռուպցիայի դեմ պայքարի

առումով, հանձնառու է շարունակել սկսած ինստիտուցիոնալ և իրական համակարգային բարեփոխումները:

2. Հայաստանի ԱՃԹՆ-ի նոր գործընկեր միջազգային դոնոր կազմակերպության ներկայացուցչի ողջունի խոսք

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության ներկայացուցիչը ողջունեց ներկաներին և ներկայացրեց, որ Գերմանիայի Դաշնային կառավարությունը իր աջակցությունն է հայտնում ՀՀ կառավարությանը՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության միջոցով տեխնիկական աջակցություն տրամադրելով ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքներում:

Քննարկված հարցերը

3. Հայաստանի 2018թ. ազգային զեկույցի նախագծի ներկայացում և հաստատում ԲՇԽ-ի կողմից

Տեղեկացվեց, որ նախքան ԲՇԽ-ի նիստին ազգային զեկույցի վերջնական նախագծի ներկայացումը, այն նախապես քննարկվել էր սույն թվականի նոյեմբերի 2-3-ը Ծաղկաձորում կազմակերպված արտագնա աշխատանքային հանդիպման ժամանակ, որից հետո այն լրամշակվել էր՝ բոլոր դիտողությունները հաշվի առնելով, և նիստից առաջ էլեկտրոնային տարբերակով տրամադրվել ԲՇԽ-ի անդամներին:

Հայաստանի առաջին ԱՃԹՆ-ի զեկույցը կազմող «Էրնսթ Ընդ Յանգ» աուդիտորական ընկերության (այսուհետ՝ անկախ ադմինիստրատոր) ներկայացուցիչների կողմից որոշվեց գլուխ առ գլուխ **ներկայացնել** ազգային զեկույցի հիմնական բովանդակային մասերը՝ շեշտադրելով ծաղկաձորյան քննարկումների արդյունքում ԲՇԽ-ի կողմից զեկույցի առաջին նախագծի վերաբերյալ ներկայացված մեկնաբանությունների, ապա քարտուղարության կողմից ներկայացված լրացուցիչ դիտարկումների հիման վրա կատարված հիմնական փոփոխությունները: Առանձին բարձրաձայնվեցին նաև այն լրացուցիչ մշակումները, որոնք վերջնական տարբերակում դեռևս չէին արտացոլվել:

Նշվեց, որ, հաշվի առնելով ներկայացված դիտարկումները, զեկույցի «Ներածության» մասում առավել մանրամասն և համապատասխան հղումներով նկարագրվել է, թե ինչ է իրենից ներկայացնում ԱՃԹՆ-ն, Հայաստանի՝ ԱՃԹՆ-ին միանալու գործընթացը, ավելացվել է համադրման գործընթացում հայտնաբերված անհամապատասխանությունների հիմնական պատճառների հակիրճ նկարագրությունը:

Զեկույցի 1-ին գլուխը ներկայացնելիս, որտեղ տրամադրվում է տեղեկատվություն հանքարդյունահանող ընկերությունների, համապատասխան պետական մարմինների և դրամական հոսքերի վերաբերյալ, **նշվեց**, որ ենթակառուցվածքների փոխադրումներից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունն առանձին բաժնով ներկայացվում է հինգերորդ գլխում:

Ներկայացվեց զեկույցի 2-րդ գլուխը, որտեղ նկարագրվում է մետաղական հանքարդյունաբերության ոլորտը՝ ներառելով տեղեկատվություն՝

- ՀՀ տնտեսության մեջ մետաղական հանքարդյունաբերության մասնաբաժնի վերաբերյալ՝ առանձին, ավելի մանրամասն տվյալներով ներկայացնելով ՀՆԱ-ում մասնաբաժինը:

- Զբաղվածության վերաբերյալ, որը ներկայացված է ըստ սեռի, աշխատանքային պայմանագրի ժամկետայնության և ըստ մարզերի ու մայրաքաղաքի բաշխվածությամբ: Անկախ ադմինիստրատորի ներկայացուցիչները **հայտնեցին**, որ յուրաքանչյուր համայնքի զբաղվածության ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տվյալների բացակայության պատճառով հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածության տոկոսային հարաբերակցությունը ցույց է տրվել ըստ մարզերի, ինչպես նաև անկախ ադմինիստրատորը լրացուցիչ հարցում է իրականացրել ընկերություններից, և զեկույցում ներկայացվել են նաև ըստ համայնքների հանքարդյունահանող ընկերությունների կողմից տրամադրված զբաղվածության տվյալները: **Նշվեց** տվյալ գլխում ներկայացված մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածության թվերի շեղումների մասին, որոնք պայմանավորված են հանքարդյունահանող ընկերություններից ստացած տվյալների և ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հավաքագրման մեթոդաբանության տարբերությամբ, որը մանրամասն ներկայացված է զեկույցի «Բացահայտումների» գլխում:

- Պետության ստացած եկամուտների վերաբերյալ՝ մանրամասն ներկայացնելով ոլորտից մուտքերը պետական և համայնքային բյուջե:

- Նպատակային ծրագրերի վերաբերյալ՝ ներկայացնելով նախնական ուսումնասիրությունում նշված և վերլուծության արդյունքում հայտնաբերված օրենքի թույլ կողմերը, ինչպես նաև ավելացվել են հղումներ ազդակիր համայնքների սահմանման անորոշության վերաբերյալ:

- արտադրության և պաշարների վերաբերյալ՝ ներկայացնելով ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետև՝ ԷԵԲՊՆ) հետ ճշգրտված հանքավայրերի թիվը և ընդհանուր

հանքավայրերի ցուցակը՝ ըստ հանքարդյունահանող ընկերության, համապատասխան հանքավայրի և ստացած արտադրանքի, ինչպես նաև 2010-2017 թվականների ընթացքում հաստատված մետաղական օգտակար հանածոների պաշարները:

- Արտահանման վերաբերյալ՝ ներկայացնելով տվյալներ ինչպես Առևտրի միջազգային կենտրոնի (ITC), այնպես էլ ընկերությունների կողմից ստացված հաշվետվությունների հիման վրա:

- Ներքին վաճառքի վերաբերյալ՝ ներկայացնելով հանքարդյունահանող ընկերությունների տրամադրած ներքին վաճառքի ցուցանիշները և զուտ արտահանման թվերը:

- Ընդերքի հետախուզման վերաբերյալ՝ ներկայացնելով 2016-2017 թվականների տվյալները և հավելվածում՝ աղյուսակով ներկայացված երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ստացած ընկերությունների ցանկը:

- Հանքարդյունահանող ընկերությունների կողմից կատարված նվիրատվությունների վերաբերյալ՝ աղյուսակով ներկացնելով ընկերությունների կողմից տրամադրված տվյալները ինչպես հիմնադրամներին հատկացված նվիրատվությունների, այնպես էլ առանձին ֆիզիկական անձանց վերաբերյալ:

Նշվեց, որ զեկույցի կարևորությունը նրանում է, որ այն ոչ թե կրկնում է որոշակի տեղ առկա տեղեկատվությունը, այլ առաջին աղբյուրից մեզ հետաքրքրող հստակ տեղեկատվություն ձեռք բերելու հնարավորություն է տալիս: Սա հատկապես կարևոր է, հաշվի առնելով, որ փաստորեն տարբեր աղբյուրներից ստացված տվյալների միջև առկա են տարբերություններ կամ պաշտոնական աղբյուրներում՝ օրինակ ՀՀ վիճակագրական կոմիտեում համապատասխան տվյալներ առկա չեն: **Առաջարկվեց՝** հանքարդյունահանող ընկերությունները հաշվետվություն տրամադրեն զբաղվածության վերաբերյալ՝ նաև ըստ համայնքների:

Առաջարկվեց՝ հետագայում ԲՇԽ-ն կարող է կառավարությանը առաջարկել մշակել հաշվետվողականության մեխանիզմ համայնքներին ուղղված հատուկ ծրագրերի մասով, քանի որ այդտեղ առկա են իրավական և գործնական թերացումներ: Առաջարկվեց, օրինակ, կազմել այդ ծրագրերի կատարողականի հաշվետվությունները և դրանք դարձնել հրապարակային, ինչը մի կողմից թույլ կտա հասկանալու՝ արդյոք այդ ծրագրերը պատշաճ կարգով են կազմվում, առկա են արդյոք համայնքներում համապատասխան

կարողություններ, և մյուս կողմից՝ արդյոք այդ ծրագրերը փաստացի իրականացվում են:

Առաջարկվեց՝ զեկույցում հնարավորության դեպքում հղում կատարել նաև ՀԲ-ի աջակցությամբ իրականացված «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատման» զեկույցի այն հատվածին, որն անդրադառնում է ոլորտի տնտեսական ազդեցության հարցին:

Առաջարկվեց ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից տրամադրված տվյալների աղյուսակներում տալ օգտագործված հասկացությունների բացատրությունները, օրինակ՝ «բացահանք», «հանքաքար և խտանյութ» և այլն, ինչպես նաև ընկերությունների և շահագործվող հանքավայրերի աղյուսակը ճշգրտել ՀՀ ԷԵԲՊՆ-ի հետ՝ հստակեցնելու հանքավայրերի բնույթը:

Հաշվի առնելով, որ հանքարդյունահանող ընկերությունների սոցիալ-տնտեսական ներդրումների առումով պայմանագրային պարտավորությունը ընդհանրական է և վերաբերում է նաև հիմնադրամներին հատկացվող և այլ նվիրատվություններին, առաջարկվեց զեկույցի 2-րդ գլխի համապատասխան մասում հղում կատարել 3-րդ գլխի սոցիալ-տնտեսական ներդրումների հատվածի այն մասին, որտեղ, մանրամասն նկարագրված է պայմանագրային պարտավորությունների հետ կապված տեղեկատվությունը, իսկ համապատասխան աղյուսակում լրացուցիչ ներկայացնել համապատասխանաբար 2016-2017 թվականների տվյալները՝ ըստ ընկերությունների կողմից ներկայացված 2016-2017 թվականների հաշվետվությունների:

Ներկայացվեց զեկույցի 3-րդ գլուխը՝ կատարված վերջին թարմացումներով: Տեղեկացվեց, որ նախապես առաջարկ էր ներկայացվել հնարավորինս կրճատել օրենքների նկարագրությունը, սակայն, հաշվի առնելով, որ Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցն է, և ՀՀ օրենքներից ոչ բոլորն են հասանելի միջազգային հանրությանը, **առաջարկվեց** իրավական դաշտը ներկայացնել առավել մանրամասն: **Տեղեկացվեց,** որ կավելացվի նաև ՀՀ ԷԵԲՊՆ-ի կողմից ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման նպատակով տրված համաձայնությունների մասին տեղեկությունները: Անկախ ադմինիստրատորը **նշեց** նաև, որ ձուլարաններին հաշվետվու դարձնելու հարցը խնդրահարույց է, քանի որ օրենսդրորեն վերջիններիս սահմանումը միանշանակ չէ, և ամենայն հավանականությամբ այս հարցի շուրջ անհրաժեշտ կլինի իրականացնել առանձին ուսումնասիրություն և հարցը կարգավորել առանձին օրենքով: Կառավարության ներկայացուցչի կողմից **նշվեց**, որ ԱՃԹՆ-ի շրջանակներում ձուլարանները ընդգրկելու հարցը խնդրահարույց է դրանց

տարանջատելու, և օրենսդրական պահանջ կիրառելու տեսանկյունից: Ձուլարանների գործունեությունը չի համարվում լիցենզավորման ենթակա, բացի այդ ձուլարանների գործունեությունն օժտված է որոշակի առանձնահատկություններով՝ ելնելով ԱՃԹՆ-ի տեսանկյունից: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ ձուլարանների գործունեությունը Ընդերքի օրենսգրքի կարգավորման առարկայից դուրս է: **Առաջարկվեց** ուսումնասիրել նաև գործունեության տեսակների դասակարգչի միջոցով ձուլարանները նույնականացնելու հնարավորությունը:

Որոշվեց, հաշվի առնելով ԱՃԹՆ-ի շրջանակներում ձուլարանների հաշվետվողականության հնարավորության հարցի շուրջ հետաքրքրվածությունը, 2019 թվականին իրականացվելիք Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքում ներառել լրացուցիչ ուսումնասիրություն իրականացնելու հանձնարարական:

Տեղեկացվեց, որ բնապահպանության նախարարության և ԷԵԲՊՆ-ի կողմից դեռևս որոշակի տեղեկատվություն կտրամադրվի թույլտվությունների տրամադրման գործընթացի հետ կապված՝ ցույց տալու, թե արդյոք եղել են սահմանված կարգից շեղումներ, թե ոչ, որոնք ևս կներառվեն զեկույցի վերջնական տարբերակում:

ԲՇԽ-ի հանքարդյունահանող ընկերությունների խմբակցության անդամի կողմից **առաջարկվեց** անդրադարձ կատարել ընդերքօգտագործման թույլտվությունից հետո անհրաժեշտ այլ թույլտվություններ (օրինակ՝ ջրօգտագործման, արտանետումների թույլտվություններ) տրամադրելիս համապատասխան պետական մարմինների կողմից ժամկետների պահպանման հետ կապված խնդրին, քանի որ այդ պատճառով հանքարդյունահանող ընկերությունները հետագայում խնդիրների առջև են կանգնում:

Կառավարության ներկայացուցչի կողմից նշվեց, որ բարձրացված հարցը տեղին է և գտնվում է համապատասխան պետական մարմինների ուշադրության ներքո: Տեղեկացվեց, որ ընթանում են քննարկումներ այդ հարցերի շուրջ՝ մասնավորապես Հողային օրենսգրքում որոշակի խնդիրներ կարգավորելու համար, բայց, այնուամենայնիվ, ցանկալի կլիներ զեկույցում, որպես հանքարդյունահանող ընկերությունների կողմից առաջարկ, անդրադարձ կատարվեր խնդրին:

Անկախ ադմինիստրատորի նեկայացուցիչը **տեղեկացրեց**, որ օրենսդրական տեսանկյունից լեռնահատկացման թույլտվությունը կամ

ընդերքօգտագործման թույլտվությունը չի երաշխավորում հողի օգտագործման իրավունքի ձեռքբերումը կամ ջրօգտագործման թույլտվությունը:

Որոշվեց, որ չնայած ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջը վերաբերում է բուն ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացին, այնուամենայնիվ, զեկույցում անդրադարձ կատարել բարձրացված հարցին: Հաշվի առնելով, որ 2019 թվականին ՀԲ-ի աջակցությամբ կառավարության կողմից նախատեսվում են իրականացնել հանքարդյունաբերության ոլորտին վերաբերող ուսումնասիրություններ՝ առաջարկվեց, որ ԲՇԽ-ն այդ գործընթացի շրջանակներում նույնպես ներկայացնի դիտարկումներ և առաջարկություններ:

Ներկայացվեց զեկույցի 4-րդ գլուխը, որը վերաբերում է համադրման գործընթացին և համադրման արդյունքում ստացված անհամապատասխանություններին, որոնք ավելի ընդգծելու համար վերջնական տարբերակում նախատեսվում է ներկայացնել դիզայներական լուծումների միջոցով:

Ներկայացվեց զեկույցի 5-րդ գլուխը, որտեղ արտացոլված են անկախ ադմինիստրատորի կողմից արված առաջարկությունները, ինչպես նաև համաձայն մեկնաբանությունների՝ ավելացվել է նոր բաժին՝ կապված ոչ կիրառելի ֆինանսական հոսքերի հետ: Հայաստանում պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման վերաբերյալ նախկինում ներկայացված հարցաթերթիկը փոխարինվել է ԲՇԽ-ի անդամների կողմից այդ հարցաթերթիկի լրացման արդյունքում ստացված պատասխանների վերլուծությամբ, իսկ ամփոփ տվյալները ներկայացված են նաև հավելվածում:

Առաջարկվեց՝ 3-րդ գլխում ներկայացված առաջարկությունները ամփոփ ներկայացնել նաև 5-րդ գլխում, որովհետև հավանական է, որ ընթերցողները առավել ուշադրություն կդարձնեն զեկույցի վերջին բաժնում ներկայացված առաջարկություններին:

Տեղեկացվեց նաև, որ USAID-ի դրամաշնորհային օժանդակությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից իրականացվող ծրագրի շրջանակում հասարակական կազմակերպությունները հնարավորություն կունենան զեկույցի հիման վրա իրականացնել վերլուծություններ և հանրային իրազեկման աշխատանքներ:

Ներկայացվեց զեկույցի 6-րդ գլուխը, որտեղ ներառված են զեկույցի բոլոր բացահայտումները:

Հայաստանի 2018թ. ազգային զեկույցի նախագիծը ներկայացվեց ԲՇԽ-ի հաստատմանը: Բազմաշահառու խումբն ընդհանուր համաձայնությամբ

(կոնսենսուսով) **հաստատեց** զեկույցը՝ պայմանով, որ անկախ ադմինիստրատորը համապատասխան լրամշակումներ կկատարի նիստի ընթացքում հնչեցված ու քննարկված հարցերի շուրջ և դրանք կներառի վերջնական զեկույցում, ինչպես նաև վերջնական տարբերակը մինչև տպագրվելը կշրջանառվի ԲՇԽ-ի անդամների միջև:

4. ԱՃԹՆ-ի ներդրման 2018թ. 3-րդ եռամսյակի աշխատանքների հաշվետվության ներկայացում և հաստատում ԲՇԽ-ի կողմից

ԱՃԹՆ-ի ներդրման 2018թ. 3-րդ եռամսյակի աշխատանքների հաշվետվությունը ներկայացվեց ԲՇԽ-ի հաստատմանը և տեղեկացվեց, որ վերջինիս շուրջ գրավոր մեկնաբանություններ չէին ստացվել ԲՇԽ-ի կողմից:

Բազմաշահառու խումբն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) **հաստատեց** ԱՃԹՆ-ի ներդրման 2018թ. 3-րդ եռամսյակի աշխատանքների հաշվետվությունը:

5. ՀՀ ԱՃԹՆ-ի 2019-2020թթ. ազգային առաջնահերթությունների քննարկում, ՀՀ ԱՃԹՆ-ի 2019-2020թթ. աշխատանքային ծրագրի նախագծի ներկայացում և հաստատում ԲՇԽ-ի կողմից

ՀՀ ԱՃԹՆ-ի 2019-2020թթ. ազգային առաջնահերթությունները և ՀՀ ԱՃԹՆ-ի 2019-2020թթ. աշխատանքային ծրագրի նախագիծը ներկայացվեցին ԲՇԽ-ի հաստատմանը: Տեղեկացվեց, որ վերջիններս նույնպես նախապես քննարկվել էին նոյեմբերի 2-3-ը Ծաղկաձորում տեղի ունեցած արտագնա աշխատանքային հանդիպման ժամանակ, որից հետո լրամշակվել և նախքան նիստը էլեկտրոնային եղանակով տրամադրվել էին ԲՇԽ-ի անդամներին: Նշվեց, որ դրանց վերաբերյալ գրավոր առաջարկներ չէին ստացվել: Նիստի ընթացքում լրացուցիչ դիտարկումներ չհնչեցին:

Բազմաշահառու խումբն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) առանց քննարկման հաստատեց Հայաստանի 2018-2019թթ. ԱՃԹՆ-ի ազգային առաջնահերթությունները և ՀՀ ԱՃԹՆ-ի 2019-2020թթ. աշխատանքային ծրագիրը:

6. ՀՀ-ում պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման ճանապարհային քարտեզի նախագծի ներկայացում և հաստատում ԲՇԽ-ի կողմից

Ներկայացվեց Հայաստանում պատասխանատու հանքարդյունաբերության (այսուհետև՝ ՊՀ) գործելաոճի ներդրման ճանապարհային քարտեզի նախագիծը, համաձայն որի ԲՇԽ-ի ՊՀ-ի աշխատանքային խմբի անդամների կողմից նախատեսվում է սահմանված ժամկետներում իրականացնել մի շարք աշխատանքներ, մասնավորապես, պատասխանատու հանքարդյունաբերության հայեցակագային փաստաթղթի մշակում, Համաշխարհային բանկի աջակցությամբ ՀՀ կառավարության կողմից 2019 թվականին իրականացվելիք ուսումնասիրությունների և հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության

մշակման աշխատանքներին մասնակցություն՝ կարծիքների և առաջարկների տրամադրման միջոցով, ինչպես նաև շրջանառվող և նոր իրավական ակտերի նախագծերի մշակման ընթացիկ աշխատանքների իրականացում պետական մարմինների հետ՝ հանքարդյունաբերության ոլորտին առնչվող իրավական ակտերի և նախագծերի մոնիթորինգի իրականացում և առաջարկությունների ներկայացում աշխատանքային խմբի քննարկմանը՝ հետագայում առավել ամփոփ կարծիքներով և հիմնավորմամբ հանրագիր ներկայացնելու նպատակով:

Տեղեկացվեց, որ նախքան ԲՇԽ-ի նիստին ՊՀ գործելաոճի ներդրման ճանապարհային քարտեզի վերջնական նախագծի ներկայացումը, այն ևս նախապես քննարկվել էր նոյեմբերի 2-3-ը Ծաղկաձորում կազմակերպված արտագնա աշխատանքային հանդիպման ժամանակ, որից հետո այն լրամշակվել էր՝ բոլոր դիտողությունները հաշվի առնելով, և նիստից առաջ էլեկտրոնային տարբերակով տրամադրվել ԲՇԽ-ի անդամներին:

Տեղեկացվեց նաև, որ քաղաքացիական հասարակության բացակա անդամի կողմից ներկայացվել է գրավոր կարծիք մասամբ նաև ՊՀ-ի ճանապարհային քարտեզի վերաբերյալ, որը որոշվեց տրամադրել ԲՇԽ-ի բոլոր անդամներին:

Որոշվեց՝ գործողություններից մեկում խմբագրական փոփոխություն իրականացնել հստակություն մտցնելու նպատակով, որ ՊՀ-ի աշխատանքային խմբի անդամի կողմից առաջարկություններ կարող են ներկայացվել ոչ միայն նոր օրենսդրական նախագծերի, այլև առկա օրենքների վերաբերյալ:

Առաջարկվեց՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ ՀՀ կառավարության կողմից 2019 թվականին իրականացվելիք ուսումնասիրությունների և հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության մշակման աշխատանքներին մասնակցության ժամկետները ներկայացնել նախապայմանով, որ դրանք հնարավոր է փոփոխման ենթարկվեն փաստացի իրականացման ժամկետներով պայմանավորված:

Հայաստանում պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման ճանապարհային քարտեզի նախագիծը ներկայացվեց ԲՇԽ-ի հաստատմանը: Բազմաշահառու խումբն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) **հաստատեց** ճանապարհային քարտեզը: